# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 57 (24610), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٦۱۰) ۵۷ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

13 ՄԱՐՏԻ 2024

چهارشنبه – ۲۳ اسفند ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ԻՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆԸ՝ ՍՈՐՈՍԻՉՄԻ ԹԻՒ ՄԷԿ «ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ»

## *Ինչո՞ւ է աղմկում «տգէտը»*

ՅԱՏԻՍ




*Վերջին շրջանում, յատկապէս, ՀՀ պաշտպանութեան նախարարի Իրան կատարած այցից յետոյ, յաճախակի են դարձել հայաստանեան «Իրազեկ քաղաքացիների միաւորում» կենտրոնի հակաիրանական տրամադրութիւն տարածող հրապարակումները:*

*Հայաստանում սորոսական շարժումը, որն արդէն ենթադրում է, որ Ռուսաստանը շուտով դուրս է բերելու իր զօրքերը Իրանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի սահմաններից միաժամանակ դատարկելով Գիւմրիում ու Էրեբունիում զբաղեցրած բազաները, անցել է իր «առաքելութեան» յաջորդ բաժնին գործի դնելով հակաիրանական քարոզչամեքենան:*

*Սորոսական կենտրոնի մեդիայի ուշադրութիւնն այժմ սեւեռուած է Իրան-Հայաստան ռազմաքաղաքական դաշինքի ուղղութեամբ: Նրանց վերագրուած Youtube-ի էջում տեղադրուած երկու րոպէանոց վերջին տեսանիւթում նշուած են Իրանի հետ ռազմաքաղաքական դաշինքի մէջ գտնուող երեք երկրները՝ Սիրիան, Եմէնը, եւ Լիբանանում որոշիչ դիրք զբաղեցնող «Հեզբոլլահ»-ը:*

*Տեսանիւթն ուղեկցւում է խօսքով, որտեղ նշւում է, որ Սիրիան մինչեւ Իրանի հետ ռազմաքաղաքական դաշինքի կնքումը, համեմատւում էր Լեհաստանի հետ: Իսկ 10-ամեայ քաղաքացիական պատերազմից յետոյ, ինչը խաղաղ ցուցարարներին Ասադի հրամանով սպանդի ենթարկելու բերումով է բռնկւել (ձեւակերպումը աղբիւրինն է) այժմ այն համեմատւում է միայն աֆրիկեան ամենավատ պայմաններում գտնուող երկրների հետ: Եմէնի մասին նոյնպէս նշւում է, որ Իրանի պատճառով այնտեղ շուրջ 10 տարի է ինչ մարդիկ պատերազմում են միմեանց դէմ, ինչի հետեւանքով 400 հազար մարդ է զոհ գնացել, որից 70 հազարը կանայք եւ երեխաներ են: «Հեզբոլլահ»-ի մասով եւս նման մօտեցում կայ, իսկ այս բոլորը երկու րոպէի ընթացքում, այսինքն այսօրւայ սոցիալական ցանցեր ստուգող օգտատէրերի համբերութեան սահմաններում:*

*Նիւթիս նպատակը ներկայացրած պատմութիւնը մեկնաբանելն ու լուսաբանելը չէ, թէ արդեօք Սիրիայում կամ Եմէնում, կամ նոյնիսկ Լիբանանում կողմերի միջեւ կռիւն ու պայքարն ինչ ակունքներ ունի, այլ՝ այն փաստերի լուսաբանումն է, թէ Փաշինեանի եւ իր թիմակիցների գաղափարական յենակէտ համարւող միաւորն այժմ ինչ օրակարգով է հրապարակ իջել:*

*Տեսանիւթում փորձ է արւել ներշնչել այն մասին, իբր Իրանը մտադիր է ստեղծել անվտանգային այնպիսի միջավայր, որը Հայաստանին կը ստիպի ընդունել Իրանի ուժերի տեղաբաշխումը Սիւնիքում՝ Ադրբեջանի Հանրապետութեան եւ Թուրքիայի ճնշման պայմաններում:*

*Այն մասին, որ Կովկասում դերակատարների մրցակցութիւնը թէժանում է՝ կասկած չկայ: Սակայն, երբ այդ մրցակցութեան նժարը ծանրութիւն է անում Իրանի Իսլամական Հանրապետութեան կողմը, սորոսական այդ քարոզչամեքենան գործի անցնելով փորձում է հանրութեան աչքին թոզ փչել: Չնայած այլեւս նախկինի պէս ոչ մէկը նրանց համար հալումաշ չի լինում քոմենթների բաժնում: Այս մասին միայն այսքանը, որ վեց օրւայ ընթացքում վերոնշեալ տեսանիւթը հազիւ հաւաքել է 41 լայք, ինչը նոյն կենտրոնից հոնորար ու աշխատավարձ ստացողների թւին մի քանի անգամով զիջում է:*



Յարդագողի ճամփորդներ ենք մենք երկու՝
Երկու ճամփորդ՝ պատառոտած շորերով:
Ու սիրել ենք տրտմութիւնը մեր հոգու՝
Անրջական կարօտներով ու սիրով:
Մենք սիրել ենք տրտմութիւնը մեր հոգու՝
Անրջական ինչ-որ կարօտ, ինչ-որ սէր:
Ու սիրում ենք առաւօտից իրիկուն
Ճամփայ երթալ – ու յաւիտեան երազել:
Աչքերիս մէջ մենք պահել ենք երկնային
Ճամփաների հեռուները դիւթական –
Ու անցնում ենք ուղիներով երկրային,
Ուր բի՜ւր մարդիկ երազեցին ու չկան:
Մշուշի պէս մեր մանկութիւնը անցաւ՝
Գորշ, անարեւ, անմխիթար մանկութիւն:
Զառանցանքի պէս մանկութիւնը անցաւ –
Ու հեռացանք: Ու չենք դառնայ կրկին տուն:
Լո՜ւռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով յաւերժական հեռուներ:
Կեանքը դարձաւ յաւերժական մի փնտրում –
Մութ, անհեթեթ, տարօրինակ կեանքը մեր:
Ու օրերում բազմագոյն ու բազմազան
Վառւեց, վառւեց ողջակիզւող սիրտը մեր,-
Բայց աչքերը մեր – արեւներ չտեսան,
Եւ մեր սրտերը – լուսաւոր հեռուներ:
Ու մշուշոտ մեր աչքերը յաւիտեան
Որոնեցին պատահական աչքերում
Յարդագողի ուղիները ոսկեման,
Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն:
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում – արեգակներ ոսկեվառ.
Ու բզկտւեց հայեացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազօրէն – հոգեվար:
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրոյ ու հացի.
Սիրտս լցւեց… բայց չգիտեմ, թէ ինչու –
Գորշ օրերի տաղտկութիւնը երգեցի…
Թաղւած մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչեայ երջանկութեան առասպել.
Մի երկնային առնչութեան պատմութիւն –
Ու կարծրացաւ սիրտս՝ անլոյս ու անբեր:
Չէ՞ որ կեանքում չհասկացաւ ոչ ոք մեզ,-
Ու խնդացին լուսաւո՛ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարօտները հրկէզ –
Ու հեռացան: Ու ո՛չ մի լոյս չբերին:
Քոյրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
Օտար մարդիկ հայհոյեցին ու անցան:
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց,
Եւ խելագարը բարեւեց կիսաձայն:
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պէս,
Կեանքը դարձաւ անմխիթար զառանցանք.
-Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք…

*Մարտի 13-ը հայ գրականութեան ամենաանհաս գագաթներից մէկի՝ Եղիշէ Չարենցի (1897-1937) ծննդեան օրն է:*

*Այսօր նա դարձաւ 127 տարեկան:*

Ստեփան Դանիէլեանը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում.

# «Տաւուշի 4 գիւղերի յանձնման քայլին իրենք վաղուց են գնացել, ուղղակի վախենում են հանրութեանը բացայայտ կերպով այդ մասին ասել»

*Տաւուշի 4 գիւղերի յանձման քայլին իրենք վաղուց են գնացել, ուղղակի վախենում են հանրութեանը բացայայտ կերպով այդ մասին ասել, բայց անուղղակի կերպով ակնարկել են, այդ թւում՝ նաեւ ՀՀ վարչապետը, երբ խորհրդարանում տեխնիկական հարցերն էր քննարկում: Ենթադրութիւնները, թէ եթէ Ադրբեջանը այդ ճանապարհները վերցնի, ապա ինչպէս է հասնելու այդ անկլաւներ, այսինքն, իրենք արդէն մուտք են գործել առեւտրային յարաբերութիւնների մէջ Ադրբեջանի հետ, ճանաչելով այդ անկլաւների գոյութիւնը: Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում նշեց քաղաքագէտ Ստեփան Դանիէլեանը:*

*Նրա խօսքով՝ Ադրբեջանը դրա հիման վրայ նաեւ կարող է ուժային ձեւով այնտեղ մտնել, որովհետեւ այդ երկրում ուղղակիօրէն ասում են, որ Հայաստանը ճանաչել է այդ անկլաւների գոյութիւնը եւ խոստացել է վերադարձնել:*






*Հարցմանը, թէ արդեօք Տաւուշի 4 գիւղերի յանձնումը նախապայմա՞ն է՝ խաղաղութեան պայմանագրի, թէ՞ ոչ, Ստեփան Դանիէլեանը նշեց, որ այն նախապայման չէ, այլ ուղղակի Ադրբեջանը յայտարարել է, որ այն իր տարածքներն է եւ պէտք է վերցնի եւ դա ուղղակի սկիզբն է, որովհետեւ Ադրբեջանը կրկին պահանջներ ունի, առանց հաշւի առնելու Արծւաշէնը եւ այն տարածքները, որ ինքը ռազմական ճանապարհով գրաւել է:*

*«Շատ կարեւոր մի յայտարարութիւն արւեց, երբ որ Բլինքէնը հանդիպել էր Թուրքիայի արտգործնախարարի հետ, այնտեղ իրենց հանդիպման մասին յայտարարութիւն էին հրապարակել, որտեղ տարբեր կէտեր կային, որոնք կապւած էին Սիրիային, Լիբիային եւ այլ երկրներին, նաեւ Հարաւային Կովկասին, երբ ասում էին, որ Թուրքիան եւ Միացեալ Նահանգները պէտք է նպաստեն, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութեան համար պայմանագիր հաստատւի, եւ նաեւ օբյեկտիւ հողի վրայ, այլ ոչ թէ ուժեղը թոյլի հետ խօսելու դիրքերից, յիշենք, որ Ադրբեջանի ընդդիմադիրներից մէկը վերջերս ասել էր, որ Թուրքիան է զսպում Ադրբեջանին, որպէսզի յարձակում չլինի, հետեւաբար նաեւ Պուտին-Էրդողան հանդիպումը, որ յետաձգւել է, պէտք է որոշակի պայմանաւորւածութիւններ ընդգրկէր, այդ*

**(Շար. 8-րդ էջում)**



Աւետիք Իսահակեանը՝ Եղիշէ Չարենցի մասին.

*«Չարենցը խռովուն, զարգացած, մեծ ինտելեկտի տէր անձնաւորութիւն էր, անհանգիստ բնաւորութիւն, ըմբոստ եւ եռուն: Բոլոր ազգերի գրականութիւնը գիտէր, լաւ ճանաչում էր, եւ մեծ ճաշակի տէր էր…*
*Չարենցի կորուստը յաւիտեան ողբալի է, եւ եթէ նա ողջ մնար, դեռ ինչեր կարող էր անել: Յամենայն դէպս նա ինչ-որ տւեց, դա մի անմահ կոթող է հայ գրականութեան մէջ»*


ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee



Արթուր Խաչատրեան.

## «Ունե՞նք երաշխիք, որ Թուրքիան դիտորդներ չի ուղարկելու Հայաստան»

*ԱԺ Եւրոպական ինտեգրման հարցերի մշտական յանձնաժողովի հերթական նիստի օրակարգում՝ «ՀՀ եւ ԵՄ-ի միջեւ Հայաստանում ԵՄ առաքելութեան՝ ՀԵՄԱ կարգավիճակի մասին համաձայնագիրը վաւերացնելու մասին» օրէնքի նախագիծն է:*

*Նիստին ներկայ է գտնուել նաեւ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեանը:*

*Նա նախ արձանագրեց փաստը, որ մի տարի Հայաստանում գործել են մարդիկ, ովքեր իրենց արարքի համար պատասխանատուութիւն չեն կրել, քանի որ համաձայնագիրը նոր ներկայացուել է ԱԺ վաւերացման համար:*

*Խաչատրեանը հարց ուղղեց Պարոյր Յովհաննիսեանին այն մասին, որ փոխարտգործնախարարի խօսքով՝ ԵՄ ոչ անդամ երկրներն էլ կարող են դիտորդներ ուղարկել: «Հնարաւո՞ր է, որ Թուրքիան էլ ուղարկի: Մանաւանդ, որ այստեղ ի տարբերութիւն խաղաղապահների, որոնք պէտք է տեղակայէին Արցախում, օրինակ՝ երկրների կազմը պէտք է Հայաստանը, Ադրբեջանը եւ Արցախի Հանրապետութիւնը հաստատէին: Այսինքն, մենք ունե՞ք որոշակի երաշխիք, թէկուզ բանաւոր, ԵՄ-ի կողմից, որ Թուրքիան, Հայաստան դիտորդներ չի ուղարկելու»:*

*Ընդդիմադիր պատգամաւորը յիշեցրեց Փաշինեանի այն յայտարարութեան մասին, որ Ադրբեջանում կայ մտահոգութիւն, որ Հայաստանն ու Ռուսաստանը կարող են միասին ռազմական գործողութիւն սկսեն Ադրբեջանի դէմ, դրա համար ԵՄ դիտորդները, որպէսզի ցրեն այդ մտահոգութիւնը: «Արդեօք դարձեալ եւրոդիտորդների քաղաքացիական առաքելութեան ներկայութիւնը Հայաստանում պայմանաւորուա՞ծ է Ադրբեջանի մտահոգութիւնը փարատելու ցանկութեամբ եւ եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ Ադրբեջանը չի պահանջել օրինակ՝ 1/10 յարաբերութեամբ դիտորդների տեղակայում Ադրբեջանի Հանրապետութիւնում»:*

**Yerkir.am**

## Հաստատուեցին Գառնիկ Դանիէլեանի նախազգուշացումները. ի՞նչ ասաց Փաշինեանը Տաւուշի մասին բառախաղերով




*«Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ Գառնիկ Դանիէլեանը եւ Քրիստինէ Վարդանեանը Տաւուշի մարզ կատարած յատուկ այցից յետոյ մի քանի օր շարունակ ահազանգում էին Տաւուշի 4 գիւղերը թշնամուն յանձնելու Փաշինեանի իշխանութեան մտադրութեան եւ դրա կործանարար հետեւանքների մասին:*

*Հրաւիրած ասուլիսում Նիկոլ Փաշինեանը քողարկել է իրականութիւնը՝ պնդելով, որ Տաւուշի մարզի որեւէ գիւղ յանձնելու մասին խօսք չի եղել ու խօսք չի կարող լինել: Բայց Փաշինեանի մանիպուլեատիւ խօսքերը հարկաւոր է աւելի ուշադիր վերծանել:*

*Փաշինեանը նշել է, որ այդ հարցի շուրջ կայ որոշակի շփոթ ու թիւրըմբռնում. «Եկէք նախ արձանագրենք, թէ որն է Հայաստանի Հանրապետութիւնը, որպէսզի կարողանանք յստակ ձեւակերպել, թէ որտեղ ու ինչպէս Ադրբեջանն ունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ ու որտեղ է, որ չունի կամ հնարաւոր է չունի: Ո՞րն է ՀՀ-ն»:*

*Փաշինեանի խօսքից կարելի է եզրակացնել, որ այդ տարածքները, որոնց մասին Ադրբեջանը յաւակնութիւններ է ներկայացնում, իր համոզմամբ՝ կարող է եւ դելիմիտացիայով պարզւի, որ Հայաստանի Հանրապետութեան սահմաններից ներս չեն:*

*Փաշինեանը ՀՀ-ի քարտէզն էր իր հետ ասուլիսի տարել ու այն ցուցադրելով՝ ասաց. «Հայաստանի Հանրապետութիւնը սա է»:*

*4 գիւղերի յանձնման մասին՝ նա յայտարարել է. «Երբեք ոչ մի քննարկման ժամանակ խօսք չի եղել ու խօսք չի կարող լինել Տաւուշի մարզի որեւէ գիւղ յանձնելու մասին: Երբ ադրբեջանական մամուլում բարձրաձայնում են գիւղերի անուններ, ՀՀ տարածքում երբեք այդպիսի անուններով գիւղեր չեն եղել ՀՀ տարածքում, ընդորում, ոչ միայն ԽՍՀՄ ժամանակներում, այլեւ դրանից յետոյ: Այն պատկերը, որ ցուցադրեցի, ՀՀ դէ իւրէ ամրագրուած տարածքն է»: Նա նշել է 3 սկզբունքները, ըստ որոնց՝ ԽՍՀՄ փլուզման պահին դէ իւրէ գոյութիւն ունեցած սահմանը, Ալմա Աթայի հռչակագրով, որը վերահաստատուել է Պրահայում, դարձել է միմեանց տարածքային ամբողջականութիւնը ճանաչելու հիմք. «Դելիմիտացիայի գործընթացում մենք պէտք է աշխատենք այդ սահմանը վերարտադրել: Մենք պէտք է ելնենք իրողութիւնից՝ այն, ինչ Հայաստան է՝ Հայաստան է, այն, ինչ Հայաստան չէ, Ադրբեջան է՝ Ադրբեջան է»:*

*Փաշինեանը չի բացառել, որ սահմանազծման գործընթացը կարող է սկսեն հէնց Տաւուշի մարզից: Փաշինեանը նշեց, որ բանակցային գործընթացում քննարկել են, որ սահմանները գծելուց յետոյ կարող են տարածքների փոխանակում անել. «Բայց ես տեսնում եմ, որ նման հնարաւորութիւնները մեծ չեն կամ դա կարող է դեֆորմացնել գործընթացը եւ լրացուցիչ ռիսկեր բերել»:*

*Նա շատ նուրբ կերպով յայտարարել է, որ կան կոմունիկացիաներ, որոնք ՀՀ դէ իւրէ սահմաններից ներս չեն գտնւում: «Այդ պատճառով կարծում եմ, առաջիկայում պէտք է գործողութիւններ անենք հետեւեալ տրամաբանութեամբ՝ այնտեղ, որտեղ մեր կոմունիկացիաները դէ իւրէ սահմաններից դուրս են, այդ հատուածները վերակառուցենք, որ ՀՀ բոլոր կոմունիկացիաները անցկացնենք ՀՀ դէ իւրէ սահմաններով, որպէսզի խնդիրներ չունենանք: Ես այցելութիւն կունենամ Տաւուշի մարզ՝ տեղում հնարաւոր խնդիրներին ծանօթանալու համար: Այս պահին որոշումներ չունենք, բայց կարծում եմ, մենք պէտք է այս ընդհանուր պրոցեսը կառավարենք այդ տրամաբանութեամբ»:*

*Այսինքն՝ նոյնը, ինչ տեղի ունեցաւ Գորիս-Կապան ճանապարհի հետ, սպասւում է նաեւ Տաւուշում, իսկ եթէ այդ կոմունիկացիաները վերահսկի Ադրբեջանը, հետեւանքները պատկերացնելը բարդ չէ: Տարբերութիւնը միայն այն է, որ ի տարբերութիւն Սիւնիքի մարզում տեղի ունեցածի, Տաւուշում թշնամուն կը յանձնի թէ՛ միջպետական նշանակութեան մայրուղին, թէ՛ Ռուսաստան Հայաստան գազատարը:*

**Yerkir.am**

«ՀայաՔՈՒԷ».

## «Վերահաստատում ենք՝ Փաշինեանն այլեւս իրաւունք չունի ՀՀ անունից բանակցութիւններ վարելու»

*«ՀայաՔուէ»-ի յայտարարութիւնը Տաւուշի մարզից գիւղերի զիջման անթոյլատրելիութեան մասին:*

*Հայ-ադրբեջանական սահմանազծման ու սահմանազատման հարցերի յանձնաժողովի՝ մարտի 7-ի հանդիպումից երկու օր անց Բաքւի բռնապետական վարչակարգն ապօրինի ու վերջնագրային պահանջ է ներկայացրել Հայաստանի Հանրապետութեանը՝ Ադրբեջանին յանձնելու Տաւուշի մարզի չորս գիւղեր՝ որպէս սահմանազծման ու սահմանազատման աշխատանքների շարունակման նախապայման:*

*Հերթական անգամ ականատեսն ենք լինում Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետութեան վրայ հարկադրանքի, ուժի գործադրմամբ սպառնալիքի կիրառման, այն դէպքում, երբ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքներ, ռազմավարական նշանակութեան բարձունքներ, միջպետական նշանակութեան ճանապարհների հատուածներ գտնւում են Բաքւի օկուպացիայի ներքոյ եւ, ի լուր ամբողջ աշխարհի, ցինիկաբար յայտարարուել է, որ ադրբեջանական զօրքերը մէկ սանտիմետր անգամ յետ չեն քաշուելու իրենց զբաղեցրած դիրքերից:*



*Ադրբեջանի այս լկտի գործելակերպն ուղղակի հետեւանք է Հայաստանում գործող հակազգային վարչախմբի պարտուողական քաղաքականութեան եւ միակողմանի զիջումների:*

*Հերթական անգամ համոզւեցինք, որ գործող իշխանութիւնների կողմից Արցախն Ադրբեջանին յանձնելը դուռ է բացել Հայաստանի հանդէպ նորանոր ագրեսիաներ գործելու համար: Բաքւի այս սանձարձակութիւնը ցոյց է տալիս նաեւ, որ Փաշինեանի վարչախմբի իշխանութեան ներքոյ Հայաստանը չի դիմակայում ադրբեջանական ագրեսիային եւ ոչ էլ ապահովում է այդ ագրեսիան կանխելու ունակ դաշնակից կամ գործընկեր երկրների աջակցութիւնը:*

*Այս վարչախումբը ծրագրուած կերպով մեր երկիրը ներքաշել է աշխարհաքաղաքական խարդաւանքների ու բախումների ոլորտ՝ այն կանգնեցնելով նոր ու աւերիչ պատերազմի շեմին, որից խուսափելու համար պատրաստ է նորանոր, ոչ պակաս կործանարար զիջումների գնալ: Այսպիսի զիջումները կը մասնատեն Հայաստանը եւ նրա տարբեր մասերը կը դարձնեն հետագայ ագրեսիայի հեշտ թիրախ:*

*Ուստի վերահաստատում ենք մեր համոզմունքն առ այն, որ Փաշինեանի վարչախումբն այլեւս որեւէ իրաւունք չունի Հայաստանի անունից բանակցութիւններ վարելու եւ պէտք է օր առաջ հեռանայ՝ ճանապարհ բացելով ազգային պրագմատիկ իշխանութեան ձեւաւորման համար,՝ որը կը համախմբի մեր ժողովրդին՝ հայրենի հողի իւրաքանչիւր սանտիմետրը պաշտպանելու համար:*

*«ՀայաՔուէ» նախաձեռնութեան խորհուրդ*

*Յ. Գ. - լուսանկարում՝ Տաւուշի մարզի Վերին Ոսկեպար գիւղի դիտակէտ-աշտարակը:*

Սերգէյ Մելքոնեան.

## «ԱՄՆ հետախուզութիւնը հայ-ադրբեջանական յարաբերութիւնների մասին»

*Երէկ հրապարակուել է ԱՄՆ հետախուզական համայնքի կողմից սպառնալիքների ամենամեայ գնահատականը: Մի փոքր հատուած հայ-ադրբեջանական յարաբերութիւններից:*

*Ամենակարեւոր մանրամասները*

*1. Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ լարուածութիւնը կը պահպանի, չնայած նրան, որ Բաքւին յաջողուել է գրաւել Լեռնային Ղարաբաղը:*

*2. 2024 թուականին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հնարաւոր հակամարտութիւնը կարող է լինել կարճաժամկէտ եւ սահմանափակ ինտենսիւութեամբ:*

*3. Նոր հակամարտութեան ռիսկը մեծացնող գործօններն են՝ նպատակներին հասնելու համար ուժ եւ ռազմական ճնշում գործադրելու Ադրբեջանի պատրաստակամութիւնը, զինուորների մօտ դիրքը, հրադադարի մեխանիզմի եւ խաղաղութեան պայմանագրի բացակայութիւնը:*

*«Միջանցք» ստանալու Ադրբեջանի ձգտումը մեծացնում է ռազմական ուժի կիրառման ռիսկը:*

*Եզրակացութիւններ*

*1. Ադրբեջանը ուժ կը կիրառի Հայաստանի դէմ: Անվտանգութեան երաշխիքները զսպող մեխանիզմ չեն սահմանափակ էսկալացիայի համար:*

*2. Հարւածի ամենահաւանական ուղղութիւնը Տաւուշն է՝ «անկլաւները» ստանալու համար: Եթէ արտաքին դերակատարների կողմից կոշտ արձագանք չլինի, Բաքուն կը փորձի հնարաւորինս արագ ճեղքել միջանցքը:*

*3. Ագրեսորին հանգստացնելու փորձերը չեն գործում: Նոյնիսկ բանակցութիւնների ժամանակ Արցախը եւ «անկլաւները» յանձնելով Հայաստանի ղեկավարութիւնը կը ստանայ նոր պատերազմ, որը նման կը լինի 2022 թուականի սեպտեմբերին, երբ կորցրեցին աւելի քան 220 զինուոր եւ ռազմավարական բարձունքներ ունեցող շուրջ 200 քառ. կմ. տարածք:*

**պ.գ.թ., միջազգայնագէտ**
**Սերգէյ Մելքոնեան**
**168.am**



# Տիգրան Եկաւեան. «Սփիւռքի օրակարգի առաջնային դարձնելը խիստ անհրաժեշտութիւն է»

***Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների մարտահրաւէրների, հայ-թուրքական կապերի ընթացիկ գործընթացների, սփիւռքահայ կառոյցների աշխատանքի ոճի արդիականացման եւ այլ թեմաների մասին «ԱԼԻՔ»-ը զրուցել է ֆրանսահայ քաղաքագէտ, արեւելագէտ Տիգրան Եկաւեանի հետ:***

***-Պարոն Եկաւեան, ինչպէ՞ս էք գնահատում Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների ներկայ մակարդակը:***

*-Դժբախտաբար առաւել քան երբեք Հայաստանի եւ Սփիւռքի կապերը գտնւում են մտահոգիչ եւ շատ վատ մակարդակի վրայ, հաշւի առնելով, որ փոխադարձ վստահութիւնը կորցւել է 44 -օրեայ պատերազմից անմիջապէս յետոյ տարբեր պատճառներով: Իհարկէ, իւրաքանչիւր կողմն ունի իր պատասխանատւութիւնը այս յարաբերութիւնների բարդացման համար, բայց առաջին հերթին կարեւոր է անդրադառնանք իրողութեանն, որ Սփիւռքի եւ Հայաստանի կապերը առողջ հիմք չունեն, որ հնարաւոր դառնայ դրա հիման վրայ մշակել ռազմավարական յարաբերութիւններ:*

*Վերջին տարիներին կապերը սահմանափակւել են հետեւեալ օրակարգերի ուղղութեամբ՝ զբօսաշրջութիւն, մարդասիրական օժանդակութիւն: Հայկական Սփիւռքը, ինչպէս Արամ Ա Վեհափառ Հայրապետն է նշում մաշւել է: Մեր խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետութեան վերնախաւն ընդհանրապէս չի ցանկանում, որ սփիւռքահայ մարդկային ռեսուրսները մասնակից դառնան պետականաշինութեան գործին եւ պետութեան հզօրացմանը: Սա առաջին խնդիրն է, որ անհրաժեշտ է շտկել, չկայ այդ մասնակցութիւնը եւ հիմա տեսնում ենք, որ Հայաստանի ներկայ իշխանութիւնները փոխարէն ազգ-պետութիւն ստեղծեն այդ գաղափարը աւելի խոցելի են դարձնում:*

***-Որո՞նք են Սփիւռքի առջեւ եղած մարտահրաւէրները, որպէսզի աւելի հնարաւոր լինի աշխատել ՀՀ-Սփիւռք յարաբերութիւնների մերձեցման քայլերի առնչութեամբ:***

*-Մեծ են մարտահրաւէրները, որովհետեւ սփիւռքահայ կառոյցները ծերացել, տկարացել են, խոցելի են դարձել եւ անհրաժեշտ է արդիականացնել, որպէսզի մենք ունենանք երկու օրակարգի իրականացման հնարաւորութիւնները: Մէկը Սփիւռքի հզօրացումն է, այսինքը դէպի Սփիւռք մտայնութեան ուժեղացումը, որպէսզի իւրաքանչիւր կարեւոր համայնք հնարաւորութիւն ունենայ քաղաքական դերակատարութիւն դրսեւորել: Թէեւ, հիմա համայնքներ կան, որոնք դրսեւորում են այդ քայլերը, մասնաւորապէս՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Լիբանան, Արգենտինա, այս համայնքները քաղաքական դերակատարութիւն են դրսեւորում: Ընդհանրապէս բոլոր համայնքները անհրաժեշտ է իրենց կառոյցները վերաստեղծեն կամ նոր կառոյցներ ստեղծեն, որպէսզի զբաղւեն քաղաքական առաքելութեամբ, որպէսզի նոր վերնախաւ ձեւաւորի եւ պաշտպանի համահայկական օրակարգ:*

*Հետեւաբար, կարեւոր խնդիրներից մէկն այն է, որ համայնքները չունեն համահայկական օրակարգ եւ միայն հետապնդում են տեղական օրակարգեր: Սակայն, հիմա հայկական աշխարհը այնքան բախտորոշ հանգրւանում է ու դիմագրաւում է աննախընթաց մարտահրաւէրների, որ անհրաժեշտ է աւելի քան երբեւէ աշխատեն միասնական, նկատի առնելով, որ առանց Հայաստանի իշխանութիւնների են գործում, որոնք զբաղւած են տկարացնելու սփիւռքահայութիւնը: Այս իշխանութիւնները անընդհատ առաջ են բերում երկու Սփիւռքի գաղափարը, դասական Սփիւռք, Մեծ Եղեռնից վերապրածները, իսկ երկրորդ Սփիւռքը, որը կազմւել է 1991 թւականից յետոյ, որոնք տարբեր բովանդակութիւն ունեցող Սփիւռքներ են: Այսինքըն, փոխարէն հզօրացնեն ներկայ կառոյցները աշխատում են բաժանել եւ նախընտրում են չէզոքացնել տարբեր պատճառներով:*

*Հետեւաբար, Սփիւռքի օրակարգի առաջնային դարձնելը շատ կարեւոր է: Մի մտայնութիւն, որը շատ քչերն ունեն: Հարկաւոր է նկատի առնել, որ այսօր երկու կառոյցներ կան, որոնք դերակատարութիւն ունեն այս ուղղութեամբ. Առաջինը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է, որ ունի համահայկական ցանց եւ Սփիւռքի դերակատարարութեան օրակարգին օգուտ եւ կարեւորութիւն է տալիս, միւսը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն է, որը զբաղւում է Սփիւռքի օրակարգով: Բայց, անշուշտ Սփիւռքի օրակարգը հնարաւոր է առաջնային դարձնել, եթէ մեր աշխատանքի մշակոյթը փոխենք, եւ այնտեղ է կարելի մտածել տեսլականի մշակման, ռազմավարական եւ Սփիւռքակենտրոն օրակարգի ձեւաւորման ուղղութեամբ, որպէսզի Սփիւռքը կարողանայ խօսել մեր անունով, եւ կարողանայ ցոյց տալ Հայաստանին, որ Սփիւռքը անելիք ունի այս ամբողջ համահայկական հարցերում:*

***- Հայ-թուրքական յարաբերութիւնների ընթացիկ գործընթացները ինչպէ՞ս էք գնահատում, Հայաստանի համար հեռանկարներ ունի՞ այդ երկխօսութիւնը, նկատի առնենք նաեւ Անթալիայում տեղի ունեցած դիւանագիտական ֆորումի ընթացքում հնչած յայտարարութիւնները Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ: Նաեւ այն իրողութիւնը, որ Թուրքիան մշտապէս առաջ է մղում այն օրակարգը, որ Հայաստանը չունենալով ելք դէպի ծով եւ գտնւելով աշխարհագրական ոչ բարենպաստ իրավիճակում պէտք է աւելի շատ շահագրգռւած լինի Թուրքիայի հետ կապերի կարգաւորման օրակարգով:***

*-Երբ խօսում ենք Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների մասին անհրաժեշտ է տարանջատել երկու սկզբունք: Առաջինը՝ հաշտեցման հարցն է, երկրորդը՝ յարաբերութիւնների նորմալացման խնդիրն է, որը երկու պետութիւնների հարց է եւ Սփիւռքը անելիք չունի, որովհետեւ խօսում ենք դիւանագիտական, առեւտրական կապերի հաստատման մասին, սակայն երբ խօսում ենք հաշտեցման մասին, ապա այո՛ Սփիւռքը իր դիրքորոշումն ունի, որովհետեւ այն վերաբերւում է հասարակութիւններին եւ անհրաժեշտ է անպայման խօսել Ցեղասպանութեան օրակարգի մասին: Միւս խնդիրը, դժբախտաբար հիմա Թուրքիայի եւ Հայաստանի մերձեցման խնդիրը ընդհանրապէս առնչւած է Ադրբեջանի եւ Հայաստանի յարաբերութիւնների հետ, որովհետեւ հիմա նոյնիսկ Ադրբեջանն է Թուրքիայի ուղղութեամբ ճնշում բանեցնում, իսկ Թուրքիան շահ չունի Հայաստանի նկատմամբ, Հայաստանը պարտւեց եւ այլեւս բոլոր խաղաքարտերը կորցւած են:*

***-Պարոն Եկաւեան յիշենք, որ յարաբերութիւնների կարգաւորման տարբեր փուլերում Սփիւռքը իր յստակ դիրքորոշումն է արտայայտել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման առնչութեամբ:***

*-Այո, ֆուտբոլային դիւանագիտութեան ժամանակ Սփիւռքը արտայայտեց իր դիրքորոշումը, սակայն Սփիւռքը հիմա դերակատար չէ, որովհետեւ կազմակերպւած օրակարգ չունի առաջ մղելու: Սփիւռքը պէտք է արդիականացնի իր կառոյցները, որպէսզի սփիւռքահայութիւնը ունենայ մէկ նարատիւ, Հայկական Դատի, Հայոց Ցեղասպանութեան արդար պահանջի գործընթացը արդիւնաւորելու համար: Ազգ-պետութիւն լինելու անհրաժեշտութիւն կայ, եթէ Հայաստանը ցանկանում է խօսել համայն հայութեան անունով պէտք է հաշւի առնի, որ հայութեան 75 -տոկոսը գտնւում է ՀՀ-սահմաններից դուրս: Հետեւաբար, եթէ մենք այս փաստի հետ հաշւի չնստեցինք, ապա հաւատալի չի լինի, որ մենք ժողովուրդ եւ ազգ ենք: Եթէ ցանկանում ենք ազգ լինել պէտք է մեր համահայկական կառոյցները արդիականացնենք, եւ հզօրացնենք, եւ հաշւի առնելով Հայաստանի տկար դիրքը մենք պաշտպանենք մեր շահերը: Անհրաժեշտ է գիտակից լինել եւ աշխատանքի յեղափոխութեան ճանապարհները մշակել:*

***-Սփիւռքի աշխատանքի նոր ոճը ինչպէս էք պատկերացնում, անդրադառնանք նաեւ ֆրանսահայ համայնքին, որի ներկայացուցիչներից էք նաեւ դուք: Ի՞նչ մարտահրաւէրների առաջ է կանգնած ֆրանսահայ համայնքը:***

*-Ֆրանսահայ համայնքը վերջին տարիներին բաւական մեծ յաջողութիւններ արձանագրեց, որովհետեւ աւելի լայն հանրութեան մէջ ներկայութիւն ապահովեց, բայց այն բաւարար չէ եւ անհրաժեշտ է նոր վերնախաւ պատրաստել, որովհետեւ բաւարար չէ միայն Ցեղասպանութեան օրակարգը առաջ տանելը, հայապահպանութեան հարցերով զբաղւելը, եթէ չունենք պատրաստ վերնախաւ: Սա է մեր մարտահրաւէրը: Եթէ խօսք լինի արդիականացման մասին անհրաժեշտ է անդրադառնալ կրթութեանը, եւ Սփիւռքը պէտք է ինքնակազմակերպւի եւ ներդրում կատարի այդ ուղղութեամբ, որպէսզի ունենանք զօրաւոր դպրոցներ նաեւ համալսարաններ, որպէսզի իւրաքանչիւր սփիւռքահայ կարողանայ պատրաստւել, եւ ստեղծենք նոր վերնախաւ ամբողջ Սփիւռքի համար: Չմոռանանք, որ մենք շատ տաղանդաւոր հայորդիներ ունենք, որոնք համայնքների հետ կապ չունեն, որովհետեւ համայնքի կառոյցները չեն կարողացել իրենց տեղ տալ, իրենց պոտենցիալը օգտագործել: Հետեւաբար մեզ անհրաժեշտ է նոր վերնախաւ:*

***Շնորհակալութիւն, պարոն Եկաւեան:***

**Զրոյցը՝ ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ**

# Ադրբեջանի արտաքին քաղաքական մարտավարութիւնը Արցախից յետոյ. տոտալ պատերազմ

**ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄԵԱՆ**
**Թուրքագէտ, Պատմական գիտութիւնների թեկնածու, ԵՊՀ դոցենտ**



*2023 թւականի սեպտեմբերից յետոյ, երբ Ադրբեջանը մէկօրեայ պատերազմում յաղթեց միայնակ մնացած Արցախի պաշտպանութեան բանակին եւ փաստացի լիարժէք նւաճեց Արցախի Հանրապետութեան տարածքը, հայաստանեան հասարակական-քաղաքական կարծիքում սկսեց թեւածել իւրատեսակ անորոշութիւն, որը կարելի էր ձեւակերպել «Լաւ, բա յետո՞յ» կենցաղային հարցի միջոցով:*

*Այս անորոշութեան պատճառը շատ պարզ է. հայութեան մեծամասնութեան ընկալումներում Արցախեան հիմնահարցը ուղղակի Արցախի հայութեան անկախացման կամ Հայաստանին միանալու հարց էր, որը, ըստ նոյն տրամաբանութեան, Ադրբեջանի հետ մեր ունեցած հակամարտութեան միակ պատճառն է: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ դա ամբողջութեամբ սխալ ընկալում է (Արցախեան հիմնահարցը հայ-թուրքական մշտական հակամարտութեան ընդամէնը մի դրւագն է) եւ այդ ընկալման արմատացած լինելու հանգամանքի մէջ առաջին հերթին մեղաւոր են ազգային վերնախաւերը: Այս պահին աւելի էական է այն, որ թէկուզ Արցախի հիմնահարցի ոչ մեր օգտին լուծւելուց յետոյ մեր հանրութիւնն ու ազգային վերնախաւերի մեծ մասը անկեղծօրէն չեն հասկանում, թէ ինչ է ուզում Ադրբեջանը (նաեւ Թուրքիան) եւ մնացած աշխարհաքաղաքական դերակատարները: Չհասկանալով Ադրբեջան-Թուրքիա երկեակի մարտավարութիւնը՝ չի ստացւում հասկանալ մնացած խաղացողների գործողութիւնները: Չկողմնորոշւած այս վիճակը յանգեցնում է էլ աւելի մեծ յուսալքութեան, հասարակական բեւեռացման տարբեր խմբերի (արեւմտամէտների ու ռուսամէտների) միջեւ, հանրային ու քաղաքական մտքի ճգնաժամի: Այս իրավիճակի խորացմանը էականօրէն նպաստում են թշնամի Ադրբեջան-Թուրքիա երկեակը, քանի որ դա խիստ թուլացնում ու նւազեցնում է հայութեան դիմադրողականութեան ուժը:*

*Հէնց այս խնդիրը հաշւի առնելով՝ փորձեմ ուրւագծել 2023 թւականից յետոյ Թուրքիա-Ադրբեջան զոյգի մարտավարութիւնը մեր հանդէպ եւ տարածաշրջանում ընդհանրապէս: Սա մասամբ կը պատասխանի «բա յետո՞յ» հարցին (իհարկէ, եթէ այս մարտավարութեանը չխանգարի որեւէ իրական հայկական ուժ):*

***Թուրքական ռազմավարութեան սկզբունքները***

*Վերջին 150 տարում Թուրքիայի մեծ ռազմավարութիւնը Հարաւային Կովկասի հանդէպ անփոփոխ կերպով հետեւեալն է. ստեղծել Հարաւային Կովկասում ամուր յենակէտ՝ իր համար հետաքրքրութիւն ներկայացնող այլ յարակից գօտիներ ու տարածաշրջաններ տարածւելու համար: Այս նպատակով Թուրքիան (նախկինում՝ Օսմանեան կայսրութիւնը) մի քանի փորձ արեց ուղիղ ռազմական միջամտութեան միջոցով գրաւել Հարաւային Կովկասը, սակայն այդ փորձերը չյաջողւեցին նախ տեղական դիմադրութեան, ապա տարածաշրջանի այլ խաղացողների (յատկապէս՝ Իրան եւ Ռուսաստան) ակտիւ միջամտութեան շնորհիւ: Այստեղ միջանկեալ եւս մէկ անգամ յիշեցնենք, որ վերջիններիս միջամտութիւնը բխում էր սեփական շահերից, այլ ոչ թէ բարեգործութեան կամ «ժողովուրդների փրկութեան» առաքելութիւնից (աւելշտալի է, որ դեռ կարիք կայ այս իրողութիւնը բացատրել):*

*Ռազմական նւաճման տապալումից յետոյ Թուրքիան դիմեց այլ մարտավարութեան: Կովկասի աստիճանական նւաճումը եւ այլ տարածքների (մասնաւորապէս՝ Իրանի հիւսիսի, Կովկասի հիւսիսի, Կենտրոնական Ասիայի թուրքախօս գօտիների) հետ կապը ապահովելու համար թուրքական վերնախաւը նախաձեռնեց եւ իրականացրեց մի հետաքրքիր նախագիծ: Հարաւային Կովկասի ռազմավարական ամենակարեւոր կտորներից մէկում՝ Կասպից ծովից արեւմուտք ընկած շրջաններում, որտեղ բնակչութեան մէջ մեծ թիւ էին կազմում թուրքախօս մուսուլմանները, ստեղծել թուրքական պետական կազմաւորում, որը փաստացի կը լինի «փոքր Թուրքիա՝ մեծ Թուրքիայի կողքին» եւ կը ծառայի որպէս թուրքական գլխաւոր գործիքը՝ Հարաւային Կովկասի նւաճման համար: Այսպէս, օսմանեան պալատում նախագծւեց «Ադրբեջան» պետութեան գաղափարը, որը յաջողութեան իրականացրեց օսմանեան բանակը 1918 թւականին: Այդ դէպքերից աւելի քան հարիւր տարուց կարելի է ասել, որ այս մարտավարութիւնը միջին արդիւնաւէտութեամբ, սակայն աշխատում է:*

*1990-ականներից ի վեր Ադրբեջանի քաղաքական վերնախաւը թէեւ մի քանի փորձեր ձեռնարկել է դուրս գալու Թուրքիայի գծած շրջանակից, սակայն ապարդիւն. իր էութեամբ Ադրբեջանը թուրքական նախագիծ է եւ շարունակելու է լինել այդպիսին:*

*Յատկապէս, որ Թուրքիան չի պլանաւորում թոյլ տալ Ադրբեջանի իրական անկախացում իրենից: Ճիշտ հակառակը, վերջին տարիներին երկու պետական համակարգերի մեծածաւալ ինտեգրացիան յուշում է, որ գործ ունենք պետութիւնների միաձուլման հետ: Այստեղից կարելի է անել շատ պարզ եզրայանգում. Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականութիւնը տեղաւորւում է Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակների մէջ: Ուստի ադրբեջանական քաղաքականութիւնը ոչ թէ փոքր երկրին բնորոշ զգուշաւորութեամբ ու փոխզիջումների սկզբունքով է առաջնորդւում (ինչպէս շատերը պատկերացնում են), այլ կայսերական*

**(Շար. 5-րդ էջում)**

# Գնահատանքի հանդիպում ազգային առաջնորդարանում







*Շաբաթ, մարտի 9-ին, ազգային առաջնորդարանի դահլիճում Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի հրաւէրով տեղի ունեցաւ գնահատանքի հանդիպում՝ Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւնների Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան ընտրատարածքի գործադիր յանձնախմբի եւ ընտրատարածքներում համագործակցութիւն ցուցաբերած անհատների մասնակցութեամբ:*

*Հանդիպմանը նախ զեկոյցով հանդէս եկաւ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան ընտրատարածքի գործադիր խորհրդի ատենապետ Վարուժ Յովհաննիսեանը, ով համապարփակ բացատրութեամբ ներկայացրեց կուսակալութիւնում տեղի ունեցած գործադիր յանձնախմբի ընտրութեան ընթացքի, նաեւ խորհրդարանական ընտրութիւններից առաջ ու ընտրութիւնների օրը յանձնախմբի տարած աշխատանքների վերաբերեալ: Նա անդրադարձաւ ընտրութիւնների կարգապահ եւ բարեյաջող ընթացքին, նաեւ մասնակիցների թւային ակնառու աճին, որոնք դրական գնահատուեցին: Վարուժ Յովհաննիսեանն իր արտայայտութիւնների աւարտին շնորհակալական խօսք ուղղեց Թեմական խորհրդին, աշխատանքներին աջակցելու եւ օժանդակելու համար:*

*Թեմական խորհրդի ատենապետ Ճրտպ. Նորայր Արամեանը, Թեմական խորհրդի անունից բարձր գնահատեց ընտրութիւնների գործադիր յանձնախմբի եւ օժանդակող անհատների բծախնդիր աշխատանքը, որը դրական է գնահատուել թէ՛ կուսակալութեան, եւ թէ՛ թաղապետարանի կողմից: Նա իր արտայայտութիւններում ընգծելով մասնակցութեան կարեւորութիւնը, գնահատեց իրանահայ համայնքի գիտակից ու պատասխանատու յանձնառութիւնը՝ ազգային-քաղաքացիական պարտականութիւնը կատարելու ուղղութեամբ: Նա նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր թեկնածուներին, ովքեր ընտրապայքարը շարունակեցին արժանապատւօրէն եւ աշխոյժ ընտրապայքար ծաւալեց: Ճրտպ. Նորայր Արամեանը նաեւ փոխանցեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի օրհնանքի, եւ գոհունակութեան խօսքը:*

*Հանդիպման աւարտին, ներկայ գտնւեց Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան վերընտիր պատգամաւոր Արա Շահվերդեանը, ով նաեւ իր հերթին շնորհակալական խօսքեր ուղղելով, իր երախտագիտութիւնը յայտնեց ընտրութիւնների գործադիր յանձնախմբին՝ վերջին քանի ամիսների ընթացքում տարած աշխատանքների եւ ընտրատարածքներում օժանդակող անհատներին՝ ընտրութեան օրը աչալուրջ եւ կարգապահ աշխատանքի կապակցութեամբ: Պատգամաւորը նաեւ անդրադարձաւ համայնքի բարձր տոկոսով արձանագրւած մասնակցութեանը յայտնելով, որ դա իրքնին մեծ յաջողութիւն է եղել: Նա իր խօսքերի աւարտին, շնորհակալական խօսքն ուղղեց բոլոր հայրենակիցներին եւ հաւաստիացրեց, որ առաջիկայ չորս տարիների ընթացքում կրկնապատիկ եռանդով է շարունակելու իր առաքելութիւնը ի նպաստ իրանահայ համայնքի շահերի պաշտպանման եւ բարօրութեան:*

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

# Արեւագալի ժամերգութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում

*Երկուշաբթի, մարտի 11-ի առաւօտեան, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հովանաւորութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում տեղի ունեցաւ Արեւագալի ժամերգութիւն մասնակցութեամբ՝ Քահանայից դասի եւ հաւատացեալների:*

*Մեծ Պահքի պահեցողութեան քառասնօրեայ ժամանակահատուածի ընթացքում եկեղեցիներում կատարւող Արեւագալի, Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւնները,*





*իրենց բովանդակութեամբ՝ աղօթքներով, քարոզներով, մաղթանքներով եւ հոգեւոր երգերով, առիթ են ընձայում հաւատացեալներին հոգեւորապէս եւ արժանապէս ապրելու ապաշխարութեան այդ ժամանակաշրջանը:*

*Հարկ է նշել, որ առաջիկայ երկուշաբթի, 18 մարտի 2024 թւականի առաւօտեան ժամը 9-ին, Արեւագալի ժամերգութիւնը տեղի է ունենալու Սրբոց Թարգմանչաց եկեղեցում:*

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

ՅԻՇԱՏԱԿ

# Հրաչ Զարիֆեանի անթառամ յիշատակին...



*Մեր եղերաբախտ ընկերոջը եթէ բնութագրելու լինենք մէկ ու միակ բառով, դա անտարակոյս ԿԱՐԳԱՊԱՀ-ն է... Նաեւ ու մանաւանդ իր իւրայատուկ կարգապահութեանը պէտք է զուգակցել պարտաճանաչութիւնը, ազնւութիւն-համեստութիւնն ու ընկերասիրութիւնը:*

*Վերոգրեալ յատկանիշերն ակընբախ են եղել բոլոր այն անձանց մօտ, ովքեր իր հետ պաշտօնավարել են «ԱԼԻՔ»-ում, երբ ինքն ճշտապահօրէն ի կատար էր ածում այն յանձնարարութիւնները, որոնք ստանձնել էր որպէս «ԱԼԻՔ»-ի վարչութեան անդամ:*

*Որպէս ՀՅԴ երկարամեայ անդամ ու գաղափարախօսութեան կրող՝ Ընկեր Հրաչը իր կուսակցական պարտաւորութիւններն ու պարտականութիւններն էլ ի կատար ածեց ամենայն սկզբունքայնութեամբ ու անաչառ կեցւածքով: Եւ կարեւորն ու վարակիչը այն՝ որ այդպէս էր ըստ էութեան, թէ՛ որպէս պարզ շարքային, եւ թէ՛ առաւել եւս որպէս շրջանի բարձրագոյն մարմնի անդամ: Չէր վրիպւում աչքերից յատկապէս մեր սիրելի ընկերոջ՝ ժողովավարական հմտութիւնները՝ յատկապէս բազմանդամ ժողովները նախագահելու պահերին: Իր բարեհամբոյր բնաւորութիւնը «թունդ ժողովականներին» իսկ արագօրէն «զինաթափ» էր անում...:*

*Առանձնայատուկ է, սակայն, Հրաչի կազմակերպական-միութենական կեանքի բնութագիրը:*

*Անդամակցած լինելով իրանահայութեան ամենաընդգրկուն մարզամշակութային «ԱՐԱՐԱՏ» կազմակերպութեանը, ու այդտեղ եւս թրծւելով բազմաթիւ աշխատանքներում, իր հարուստ փորձն ու աւանդը ներդրեց կազմակերպութեան պատասխանատու գործերի տարբեր բնագաւառներում, դարձեալ թէ՛ որպէս պարզ միութենական, եւ թէ՛ որպէս պատասխանատու-վարչական...:*

*Անմոռանալի էր ինձ, որպէս լրագրողի, ու վստահ եմ շատ-շատերի համար, 2001 թւականի ամռանը, երբ թեհրանահայութեան ընտրեալ մարզիկ-մարզուհիները ի մի էին եկել «ԱՐԱՐԱՏ» մարզաւանում, որտեղ երեք հանրակառքերով Երեւան պէտք է մեկնէին՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Առաջին խաղերին մասնակցելու համար:*

*Մեծ եռուզեռ, անասելի խանդավառութիւն էր մարզաւանի շուրջ բոլորը:*

*Աներեւելի, բայց վիթխարի գործերի կիզակէտում էր նոյնինքն Ընկեր Հրաչը եւ բծախնդրօրէն անում վերջին կարգադրութիւնները, որոնց արդիւնքում նաեւ թեհրանահայ պատւիրակութիւնը պատւաւոր ու յաղթական մասնակցութիւն ունեցաւ Համահայկական Օլիմպիական խաղերին...:*

*Մեր սիրելի ու անմոռանալի Ընկեր Հրաչ, կեանքիդ վերջին հանգրւանից՝ հայրենի երկիր Հայաստանից եկած մահւանդ բօթը ցնցիչ էր, անսպասելի ու վաղաժամ:*

*Քո սնուցիչ ու դաստիարակիչ յիշատակը մշտապէս վառ կը մնայ Քո գաղափարական, միութենական ու մասնաւորապէս ընտանեկան պարագաների հոգում, սրտում ու մտքում...*

*Նինջ՛ը խաղաղ հայրենի հողում ազնւագոյն Ընկեր...:*

**Դ. Մ.**

# Ադրբեջանական վանդալիզմի հերթական թիրախ դարձաւ Խաչատուր Աբովեանի արձանը. Հայքի մշակութային օմբուդսմէն



*Ադրբեջանը շարունակում է պետական մակարդակով ոչնչացնել Ստեփանակերտում տեղադրւած արձանները: Իր «Ֆէյսբուք»-եան էջում գրում է Հայքի մշակութային օմբուդսմէն, ադրբեջանագէտ Յովիկ Աւանէսովը:*

*«Ադրբեջանական վանդալիզմի հերթական թիրախ դարձաւ հայ մեծ գրող, լուսաւորիչ Խաչատուր Աբովեանի արձանը: Արձանը գտնւում էր գրողի անունը կրող դպրոցի բակում: Հարկ ենք համարում նշել, որ արձանը հէնց պատրաստւել է դպրոցի բակում՝ 2013-2015 թթ.-ին, քանդակագործ Պետրոսեան Արմէնը:*

*Այս ամէնը եւս մէկ անգամ ապացուցում է, որ ամբողջ Արցախի մշակութային ժառանգութիւնը գտնւում է վտանգի տակ:*

*Ըստ «Զինւած հակամարտութիւնների ժամանակ մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» 1954 թւականի Հաագայի կոնւենցիայի 4-րդ յօդւածի՝ արգելւած է մշակութային ժառանգութեան հանդէպ վանդալիզմի, գողութեան, կողոպուտի, իւրացման, թշնամանքի եւ հաշւեյարդարի ցանկացած գործողութիւն: Հաագայի 1954 թւականի առաջին արձանագրութիւնն արգելում է օկուպացւած տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգեւոր արժէքները»,-գրել է նա:*

**Yerkir.am**



Տիգրան Քոչարեան.

# «Իրենց ինքնազոհութեան հաշւին 70 մարդ են փրկել. ինչու եւ ինչպէս են յանձնուել Բակո Սահակեանը, Արկադի Ղուկասեանը, Լեւոն Մնացականեանն ու Դաւիթ Իշխանեանը»

*«Սասուն Միքայէլեանին բարդ է պատասխանել, որովհետեւ ինքը երկրապահ չէ, հրազդանապահ է իր էութեամբ: Կապուած Արցախի նախագահների հետ՝ բազմիցս ասել է, որ նոյն նախագահներն իրենց կամքով են դուրս եկել ռուսական բազայից՝ գտնելով ռուսների պաշտպանութեան ներքոյ: Եւ քանի որ այնտեղ հարց էր դրուած, ու մօտ 70 հոգու մասով Ադրբեջանը շանտաժի էր ենթարկում, որ նրանց կը տանի Բաքու, եթէ նախագահները չյանձնուեն, նախագահներն այդ քայլն արեցին»,- Սաթիկ Սէյրանեանի «Պրեսսինգ» հաղորդաշարի հերթական թողարկման ժամանակ ասել է մեդիափորձագէտ, քաղաքական մեկնաբան Տիգրան Քոչարեանը՝ պատասխանելով սպարապետ Վազգէն Սարգսեանի ծննդեան 65-րդ տարեդարձի օրը Եռաբլուրում Երկրապահ կամաւորականների միութեան (ԵԿՄ) նախագահ Սասուն Միքայէլեանի հընչեցրած այն մտքին, թէ եթէ ռուսներն ուզէին, Արցախի նախագահներին դուրս կը բերէին Արցախից, ու նրանք չէին յայտնուի ադրբեջանական գերութեան մէջ:*

*Հակադարձելով ԵԿՄ նախագահ Սասուն Միքայէլեանին, Տիգրան Քոչարեանը հարց հնչեցրեց՝ այդ դէպքում ինչպէ՞ս են Հայաստանի տարածքում յայտնուել Սամուէլ Շահրամանեանը, Վիտալի Բալասանեանը, Արշաւիր Ղարամեանը եւ այլ գեներալներ, պատերազմի մասնակիցներ: Ովքե՞ր են իրենց պահել, բերել եւ ապահով հասցրել այստեղ. «Այստեղ մուտիլովկէք անել պէտք չէ»:*

*«Առնւազն Ռուսաստանն իր ղեկավարութեան շուրթերով խօսել է Արցախի նախագահների հարցի մասին, եւ կարծեմ Պուտինն ասել է՝ ես խնդրել եմ Իլհամ Ալիեւին հումանիստական վերաբերմունք ցուցաբերել այդ մարդկանց նկատմամբ: Հայաստանի ղեկավարութիւնը բառ անգամ չի ասել այս ամենի ուղղութեամբ: Այսինքն՝ մենք կրկին Ռուսաստանին պարտադրում ենք լինել աւելի պրոհայկական, քան Հայաստանի իշխանութիւնները»,- ասել է նա:*

*Քաղաքական մեկնաբանի խօսքով՝ այս մանիպուլիացիաներին պէտք է վերջնական պատասխաններ տրուեն:*

*«Եւս մէկ անգամ ասեմ, որ Բակո Սահակեանը, Արկադի Ղուկասեանը, Դաւիթ Իշխանեանը յանձնուել են Ադրբեջանին, դուրս են եկել ռուսական ռազմաբազայից, որտեղ ռուսներն իրենց անվտանգութիւնն են ապահովել, ինքնակամ գնացել են, յանձնուել, որպէսզի 70 հոգի գերեվարուած ոստիկանութեան աշխատողներին, հրշէջներին, փրկարարներին ազատ արձակեն»,- ասաց Տիգրան Քոչարեանը՝ յաւելելով՝ ինչպէ՞ս է Արայիկ Յարութիւնեանը յայտնուել ադրբեջանական գերութեան մէջ, թող Արայիկ Յարութիւնեանից հարցնեն:- Շատ է վստահել Ադրբեջանի անվտանգութեան աշխատակիցներին»:*

*«Էլի եմ ասում, Ադրբեջանում Արայիկ Յարութիւնեանի յայտնուելը մի քիչ այլ ճանապարհով է տեղի ունեցել: Բայց եթէ խօսքը գնում է Բակո Սահակեանի, Արկադի Ղուկասեանի եւ Դաւիթ Իշխանեանի մասին, այդ մարդիկ իրենց ինքնազոհութեան հաշւին 70 հոգի են փրկել, դուրս բերել:*

*Ընդորում, ուրիշ բան էլ աւելացնեմ, որ որոշների մօտ ցանկութիւն է եղել ինքնասպանութիւն գործել, բայց քանի որ ադրբեջանցիները պայման էին դրել, որ Արցախի նախագահների ինքնասպանութեան դէպքում գերի վերցրած այդ 70 հոգուն չեն ազատի, գնացել, յանձնուել են, այսինքն՝ փրկել են 70 հոգու: Եւ պէտք է վերջ տալ այդ մանիպուլիացիաներին եւ ռուսական կողմին խառնել: Էլի եմ ասում, եթէ ռուսական կողմն այդքան վատն էր, ապա ինչպէ՞ս են այստեղ յայտնուել Սամուէլ Շահրամանեանը, Կարէն Սարգսեանը… Սամուէլ Բաբայեանն այլ ճանապարհով է դուրս եկել եւ այլ մարդկանց խնդրանքով՝ հաշւի առնելով այն հանգստութիւնը, որով նա անցել է:*

*Այսինքն՝ հակադարձելով Սասուն Միքայէլեանին՝ ասեմ, որ ռուսներն ում տիրութիւն արել են, բարով-խերով հասցրել, բերել են: Նախագահներն էլ կը գային, բայց նրանք ասել են՝ մենք վերջինն ենք դուրս գալու Արցախից՝ վերջին հայը դուրս կը գայ Արցախից, մենք էլ դուրս կը գանք: Մինչդեռ որոշ շրջանակներ մանիպուլացնում էին, թէ Արցախի նախագահները դեռեւս երկու շաբաթ առաջ էին ցանկացել դուրս գալ, բայց ռուսները չեն թողել, ուղղաթիռ չեն տուել»,- եզրափակել է Տիգրան Քոչարեանը:*

## Ադրբեջանի...

(Շար. 3-րդ էջից)

*նպատակներ ունեցող թուրքական տէրութեան:*

*Այսպիսով, ամփոփենք ռազմավարական հիմնական խնդիրը. չէզոքացնել Հայաստանին որպէս առանձին ու ինքնուրոյն քաղաքական միաւոր: Այդ ուղղութեամբ ամենաարդիւնաւէտ քայլը եղել է 1915 թ. Հայոց Ցեղասպանութիւնը, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը, 1921 թ. Նախիջեւանի անջատումը Հայաստանից, իսկ մեր օրերում՝ Արցախի նւաճումը: Այժմ թիրախում միւս ռազմավարական առաջնահերթութիւնն է՝ Սիւնիքը:*

*Կարեւոր է մտապահել, որ թուրքական ընկալման մէջ Հայաստանը զուտ միայն հայկական սպառնալիք չէ: Այս տարածքում հայկական պետութեան գոյութիւնը, որը ինքնաբերաբար ենթադրում է հակադրում թուրքական ծաւալապաշտութեանը (քանի որ Թուրքիան ցանկանում է գրաւել ողջ Կովկասը, ինչը բացառում է հայկական անկախ միաւորի գոյութիւն), իւրայատուկ աշխարհաքաղաքական մագնիսական ուժով դէպի իրեն է ձգելու Թուրքիայի տարածաշրջանային յաւակնութիւնների դէմ հանդէս եկող բազմաթիւ ուժերի (ինչպէս մեր օրերում՝ Իրանին): Այս պատճառով հայ-թուրքական հակամարտութիւնը թուրքական քաղաքական վերնախաւերի ընկալումներում մաս է Թուրքիայի մեծ աշխարհաքաղաքական պայքարի, որը մղւում է դեռ Օսմանեան կայսրութեան օրերից:*

*Ռազմավարական այս սկզբունքները պէտք է յիշել մնացած մարտավարական գործողութիւնները հասկանալու համար:*

**Ադրբեջանի մարտավարական բազմաշերտութիւնը**

*2023 թւականից յետոյ Ադրբեջանը, ելնելով մեծ թուրքական ռազմավարութիւնից, որդեգրել է մարտավարական գործողութիւնների մի ամբողջ համալիր, որի հիմնական նպատակը կարելի է բանաձեւել հետեւեալ կերպ. թուլացնել հայկական պետականութիւնը կամ դրա ենթակառուցածքներն այնքան, որ դրա առանձին մասերի կամ ամբողջի նւաճումը վերածւի տեխնիկական խնդրի: Մօտաւորապէս այդ մարտավարութիւնն է կիրառել Արցախի Հանրապետութեան նկատմամբ վերջին երեք տարիներին (շրջափակում, Փառուխի գրաւում եւ այլ գործողութիւններն ուղղուած էին դիմադրութեան ռեսուրսի նւազմանը):*

*Հայաստանի Հանրապետութեան դէմ մարտավարական վերոնշեալ համալիրը կարելի է բաժանել 4 հիմնական ուղղութիւնների: Հակիրճ անդրադառնանք դրանցից իւրաքանչիւրին:*

**Առաջին ուղղութիւն.** *քաղաքական ճանապարհով հասնել հայկական պետականութեան իրաւական ու փիլիսոփայական հիմնասիւների վերացմանը: ՀՀ սահմանադրութիւնը կամ ներքին օրէնսդրութիւնը փոխելու պահանջները հէնց այս տրամաբանութեան մէջ են: Պէտք է ստեղծւեն այնպիսի պայմաններ, որոնք թոյլ չեն տայ կամ հնարաւորինս կը խոչընդոտեն Հայաստանում թուրք-ադրբեջանական ազդեցութեանը դիմադրելու մեխանիզմների եւ ուժերի ստեղծմանը (գրեթէ բոլոր կապիտուլիացիոն պայմանագրերին յատուկ պահանջ): Այս նոյն շարքին են պատկանում Հայաստանում կրթական համակարգի փոփոխութեան, հանրային յիշողութեան վայրերի ու յիշատակի օրերի վերացման պահանջները, որոնք, ինչպէս գիտէք, աստիճանաբար կատարւում են: Այլ խօսքով՝ մարտավարական այս ուղղութեան խնդիրն է այնպէս անել, որ չլինի իրական հայկական պետութիւն ունենալու հանրային պահանջ կամ այդ պահանջը իրացնող օրինական մեխանիզմներ:*

**Երկրորդ ուղղութիւն.** *հայկական պետականութեան ինքնուրոյնութիւնը նւազեցնող զիջումների ձեռքբերում: Այս շարքին կարելի է դասել այսպէս կոչուած «անկլաւների վերադարձի» կամ հայկական ատոմակայանի փակման պահանջները: Այսպէս, «անկլաւների» տարածքը թոյլ է տալու վերահսկել Հայաստանի արտաքին ճանապարհները, իսկ ատոմակայանի փակումը՝ զրկելու է մեզ էներգետիկ ինքնուրոյնութիւնից՝ յաւելեալ կախման մէջ դնելով: Այս շարքը կարելի է շարունակել:*

**Երրորդ ուղղութիւն.** *գերակտիւ ու նախաձեռնող արտաքին քաղաքականութեան միջոցով հասնել ադրբեջանական կողմի համար աշխարհաքաղաքական նպաստաւոր միջավայրի ձեւաւորմանը: Այս ուղղութիւնն իր հերթին բաժանւում է մի քանի հիմնական խնդրի: Նախ պէտք է ապահովել ադրբեջանական պահանջների եւ ծրագրերի համար արտաքին լեգիտիմութիւն: Օրինակ՝ այսպէս կոչուած «Արեւմտեան Ադրբեջանի» ու «տեղահանուած ադրբեջանցիների» թեմայի բարձրաձայնումն ու միջազգայնացումը թոյլ են տալիս Ադրբեջանին իրենց յարձակումները ՀՀ ինքնիշխան տարածքի վրայ որոշակի իմաստով լեգիտիմացնել կամ գոնէ լեգալացնել: Նոյն նպատակին են ծառայում նաեւ իբր Հայաստանում «ադրբեջանական մշակութային ժառանգութեան ոչնչացման» թեմայով կատարւող աշխատանքները:*

*Միւս կողմից Ադրբեջանը փորձում է ստանալ այլ երկրների աջակցութիւնը իր գործողութիւններում: Այստեղ բաւական է բերել այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցք»-ի օրինակը: Այսպէս, մեծացնելու համար «միջանցքի» շահառուների թիւը եւ այդպիսով ապահովելու համար Հայաստանի վրայ նոր ճնշում՝ Ադրբեջանը հետեւողական կերպով այս թեմայում է ներգրաւում տարբեր երկրների (Կենտրոնական Ասիայից մինչեւ Ինդոնեզիա): Նոյն նպատակին են ծառայում նաեւ Հայաստանին հակախաղաղական երկիր ներկայացնելու Ադրբեջանի հետեւողական ջանքերը:*

*Դիւանագիտական ուղղութեան միւս նպատակն է վատթարացնել Հայաստանի երկկողմ յարաբերութիւնները մեզ համար կարեւոր երկրների հետ: Այստեղ, ինչպէս կարելի է կռահել, հիմնական թիրախը հայ-ռուսական եւ հայ-իրանական յարաբերութիւններն են, որոնց թուլացումը բխում է բացառապէս թուրք-ադրբեջանական շահից (այս մասին տե՛ս այստեղ): Միաժամանակ, աշխատանք է տարւում չէզոքացնելու համար հայկական գործօնը նշուած երկրներում (անզէն աչքով կարելի է տեսնել այդ աշխատանքի արդիւնքը, օրինակ, Ռուսաստանում):*

*Արտաքին քաղաքականութեան մարտավարական մէկ այլ նպատակն է թուրք-ադրբեջանական տարածաշրջանային քաղաքականութիւնից դժգոհ եւ դրան դիմադրող ուժերի եթէ ոչ չէզոքացումը, ապա գոնէ վերջիններիս դիմադրութեան նւազեցումը կամ զսպումը: Այստեղ կարելի է տեսնել իրականացւող հետեւողական աշխատանքը Իրանի հետ՝ նոյն «միջանցքի» թեմայով կամ թուրք-ադրբեջանական լաբբինգի գերակտիւութիւնը Ռուսաստանում: Խորքի մէջ լինելով հակառուսական պետութիւն՝ Ադրբեջանը կարողանում է Թուրքիայի հետ միասին Ռուսաստանի ուշադրութիւնը շեղել եւ իր համար կորզել անհրաժեշտ արդիւնքներ տարածաշրջանում (այս հարցին կանդրադառնամ առանձին մէկ այլ առիթով):*

*Այս ուղղութեան լաւագոյն օրինակներից մէկը վերջին շաբաթներին լայնօրէն օգտագործւող «ֆրանսիական խաղաքարտն» է: Լաւ գիտակցելով, որ Ֆրանսիան այս պահին հաւաքական Արեւմուտքի անունից զբաղւում է Հայաստանին ռուսական ազդեցութեան գօտուց հանելու խնդիրով եւ, բնականաբար, որեւէ իրական ռազմական այլընտրանք չի տալու Երեւանին, Ադրբեջանը խթանում է «հակաֆրանսիականութեան» թեման՝ այդպիսով պատրանք ստեղծելով հայութեան շրջանում, որ իսկապէս «Ֆրանսիան Ադրբեջանի դէմ կը պաշտպանի Հայաստանին»: Մի կողմ թողնելով այն ակնյայտ իրականութիւնը, որ Ֆրանսիան լաւագոյն դէպքում լինելու է մեր փաստաբանը, բայց ոչ երբեք թիկնապահը (ուստի բուն ռազմական հարցերում մէկ ոչ մի բան չենք ստանալու), այս համատեքստում աւելի էականն այն է, որ նման քայլով Ադրբեջանը նպաստում է հայ-ռուսական յարաբերութիւնների վատթարացմանը:*

*Վերջին՝* **չորրորդ ուղղութիւնը** *կապուած է այսպէս կոչուած «կոպիտ ուժի» հետ: 2020 թւականից յետոյ Ադրբեջանը Թուրքիայի հետ միասին անդադար կուտակում է նոր ռազմական պաշարներ, իրականացնում է տասնեակ զօրավարժութիւններ, ստեղծում է ռազմական նորանոր ենթակառուցածքներ, որոնք հիմք են նախապատրաստում Հայաստանի դէմ նոր պատերազմի: Այստեղ տրամաբանութիւնը շատ պարզ է. ստեղծել ռազմական նւաճման համար անհրաժեշտ հիմքերը: Եթէ այդ նպատակին հնարաւոր լինի հասնել առանց զէնքի՝ նախորդ երեք կէտերում նշուած մարտավարութեան շնորհիւ, ապա շատ աւելի լաւ: Եթէ ոչ, ապա կարելի է փորձել կրկնել 2021 թ. մայիսին Սիւնիքի Սեւ լճի կամ 2022 թ. սեպտեմբերին Ջերմուկի նւաճման գործողութիւնները, որոնք ՀՀ ներսում արդէն իսկ թուրք-ադրբեջանական զօրքերի համար ստեղծել են ռազմավարական գերակայութիւն:*

*Ահա այս հիմնական չորս ու իրար լիարժէք փոխլրացնող ուղղութիւններով է առաջնորդւում Ադրբեջանի մարտավարութիւնը վերջին ամիսներին ու այդպէս է լինելու նաեւ առաջիկայ շրջանում: Այլ բառերով սա կոչւում է տոտալ պատերազմ: Որեւէ ուղղութեամբ հայկական կողմի զիջումը ինքնաբերաբար յանգեցնում է միւս ուղղութիւններով՝ պահանջների ոչ թէ նւազմանը, այլ հակառակը՝ մեր՝ դրանց դիմադրելու հնարաւորութիւնների նւազմանը եւ ադրբեջանական պահանջների ամրապնդմանը:*

**Միակ սպառնալիքը եւ օրակարգը**

*Ադրբեջանի մարտավարութիւնը բխում է ռազմավարութիւնից, որի նպատակն է չէզոքացնել (իսկ հնարաւորութեան դէպքում՝ վերացնել) հայկական պետականութիւնը: Սա է հայկական պետութեան համար մէկ խնդիրը: Սրա չլուծման պարագայում մնացած հարցերում արձանագրուած որեւէ առաջընթաց դառնում է անիմաստ, ինչպէս Արցախում 2020 թւականից յետոյ կառուցուած բնակելի շէնքերը: Ադրբեջանա-թուրքական այս ռազմավարութեանը կարող է հակադրւել միայն նոյնանման տոտալ՝ պատերազմի մղման տրամաբանութեամբ՝ բոլոր ճակատներում: Իսկ տոտալ պատերազմ վարելու ոչ միայն ունակութիւն, այլեւ ցանկութիւն ՀՀ դէ-ֆակտո իշխող ուժը չունի:*

*Առկայ մօտեցման պահպանման դէպքում պէտք է յիշել, որ օգնութեան չեն գալու ոչ միայն «անգլիական նաւերը», այլեւ չեն փրկելու Մակրոնի «Ֆէյսբուք»-եան հայալեզու գրառումները:*

# Արցախցի Դմիտրի Ադամովը յաղթել է Թուրքիայի միջազգային յուշամրցաշարում

*Թուրքիայում մարտի 7-ից 10-ը կայացել է «Յաշար Դողու եւ Վեհբի Իմրէ 2024» միջազգային յուշամրցաշարը, որտեղ մինչեւ 72 կգ. քաշային կարգում յաղթող է ճանաչուել ծագումով արցախցի մարզիկ Դմիտրի Ադամովը՝ եզրափակչում 5:3 հաշւով յաղթելով Վրաստանի ներկայացուցիչ Օթար Աբուլաձէին:*

*Առաջին մենամարտում հայազգի մարզիկը 5:3 հաշւով յաղթել է իրանցի մարզիկին: Երկրորդ մենամարտում Դմիտրին այս քաշային կարգում Ռուսաստանի ներկայացուցիչ Իմրան Ալիեւին յաղթել է 3:1 հաշւով: Այս պայքարը Ռուսաստանի հաւաքական մտնելու իրաւունքի համար էր՝ յաջորդ մրցումներին մասնակցելու համար:*



*Երրորդ գօտեմարտում նա 8:0 հաշւով յաղթել է Կիրգիզստանի մարզիկին:*

*Դմիտրի Ադամովի գլխաւոր մարզիչը Աշոտ Զաքարեանն է:*

# «Օսկար»-ի արժանացած ֆիլմում հայ հերոսը պատմում է Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների մասին




*Լոս Անջելէսում կայացած «Օսկար»-ի 96-րդ մրցանակաբաշխութեանը «Վերանորոգւած վերջին խանութը» (The Last Repair Shop) ֆիլմը ճանաչուել է «Լաւագոյն կարճամետրաժ վաւերագրական ֆիլմ»: Ֆիլմի ռեժիսորներն են Բէն Փրուդֆութը եւ Քրիս Բաուերսը:*

*Ֆիլմի գործողութիւնները ծաւալւում են Լոս Անջելէսում: Այն պատմում է քաղաքի կենտրոնում գտնըւող պահեստի մասին, որտեղ մի քանի նուիրեալ վարպետներ լաւ վիճակում են պահում աւելի քան 80000 ուսանողական երաժշտական գործիքներ:*

*«Վերանորոգման վերջին արհեստանոցը» ֆիլմի չորս հերոսներից մէկը հայ Ստիւ Բաղրամեանն է, ով 1980-ականների վերջին Ադրբեջանում ենթարկուել է էթնիկ զտումների:*

*«Ես իմացայ, որ Ստիւը՝ ֆիլմի գլխաւոր հերոսներից մէկը, անձամբ լարել է դպրոցի դաշնամուրները, որոնք ես նուագել եմ, երբ ես ուսանող էի»,- ասում է Բաուերսը:*

**Panorama.am**

# «Օսկար»-ի ներկայացուած հայկական «Ամերիկացին» ֆիլմը չանցաւ լաւագոյն ինգեակ




*Հոլիվուդում մարտի 11-ի գիշերը կայացաւ «Օսկար»-ի 96-րդ ամենամեայ մրցանակաբաշխութիւնը: Կինոարտադրութեան շնորհալիներին խրախուսող ամենամեծ միջոցառումն անցկացուեց «Դոլբի» թատրոնում: Պարգեւատրուեցին նախորդ տարուայ լաւագոյնները:*

*Հայաստանն այս տարի Մայքլ Գուրջեանի եւ Արման Նշանեանի «Ամերիկացին» ֆիլմով առաջին անգամ էր դասակարգել «Օսկար» մըրցանակաբաշխութեան Լաւագոյն օտարերկրեայ ֆիլմ անուանակարգի Short list-ում, սակայն ֆիլմը չանցաւ լաւագոյն հնգեակ:*

*Յիշեցնենք, որ ամենաշատ արձանիկներ ստացաւ «Օպենհայմերն» ֆիլմը՝ 7 անուանակարգերում: «Բարբի» ֆիլմը, որը 1 տարի շարունակ մեծ ժողովրդականութիւն էր վայելում, մրցանակ ստացաւ միայն Լաւագոյն օրիգինալ երգ անուանակարգում: Իսկ Մարտին Սկորսեզէի «Ծաղկի լուսնի մարդասպանները» ֆիլմը, որը ներկայացուած էր 10 անուանակարգերում, մնաց առանց մրցանակների:*

# Մխիթարեանը խաղադաշտում անցկացրած ժամանակով մնում է առաջատար «Ինտեր»-ի ֆուտբոլիստների շարքում



*Հայաստանի հաւաքականի նախկին ֆուտբոլիստ, Միլանի «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղադաշտում անցկացրած ժամանակով (2771 րոպէ) մնում է առաջատար «Ինտեր»-ի ֆուտբոլիստների շարքում: Այս մասին գրում է Corriere dello Sport–ը:*

*35 տարեկան Հենրիխ Մխիթարեանը վերջին 14 հանդիպումներն անցկացրել է հիմնական կազմում:*

*2023/24 թթ.-ի մրցաշրջանում նա պահեստայինների նստարանը չի լքել 37 խաղից ընդամէնը 3-ում (վերջին անգամ՝ դեկտեմբերի 20-ին, Իտալիայի գաւաթի՝ «Բոլոնիա»-ի հետ խաղում):*

*«Նա աչքի է ընկնում նախանձելի մարզավիճակով, ինչի շնորհիւ դարձել է թիմի հիմնասիւներից մէկը: Ինձագին («Ինտեր»-ի գլխաւոր մարզիչ - խմբ.) հասկանում է, որ նման ֆուտբոլիստին թէ՛ փորձով, թէ՛ արդիւնաւէտութեամբ փոխարինող դժուար կը լինի գտնել»,- գրում է պարբերականը:*

# Հայ շախմատիստները մրցանակային տեղեր են զբաղեցրել Իրանի 8th Khavaran International մրցաշարում



*Իրանի Բիրջանդ քաղաքում 8th Khavaran International մրցաշարի շըրջանակներում անցկացուեց կայծակնային շախմատի մրցաշար: Այս մասին յայտնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:*

*Մրցաշարում 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց գրոսմայստեր Հրայր Սիմոնեանը, ով 11 հնարաւորից վաստակեց 9 միաւոր:*

*ՖԻԴԷ-ի վարպետ Էդգար Հայրապետեանը 8.5 միաւորով զբաղեցրեց 3-րդ հորիզոնականը:*

Frontiers in Nutrition.

# «Մարզումների ժամանակ բազուկի հիւթը բարելաւում է անօթների աշխատանքն աւելի լաւ, քան սննդային յաւելումները»

*Ֆիզիկական վարժութիւնների ժամանակ բազուկի հիւթը խթանում է նիտրատների առաջացումն աւելի լաւ, քան սննդային յաւելումները: Այս մասին տեղեկացրել են ամփոփ հետազօտութեան հեղինակները, որը հրապարակուել է Frontiers in Nutrition ամսագրում:*

*Նիտրատային յաւելումները մարզւող մարդկանց համար կարող են բարելաւել մկանները, անօթների ֆունկցիան, վարժութիւնների արդիւնաւէտութիւնը: Կարծիք կայ, որ այդ էֆեկտները կապւած են օրգանիզմում ազոտի օքսիդի արտադրման աւելացման հետ, նիւթ, որն իջեցնում է զարկերակային ճնշումը եւ կարգաւորում տարբեր ֆիզիոլոգիական պրոցեսներ: Բազուկը եւ նրա տերեւը պարունակում են մեծ քանակութեամբ նիւթեր, որոնք կարող են վերածուել ազոտի օքսիդի:*



*Ինչպէս պարզել են նոր աշխատանքի հեղինակները, որոնք ուսումնասիրել են հրապարակւած հետազօտութիւնները, բազուկի հիւթը կարող է նիտրատային յաւելումներից աւելի արդիւնաւէտ լինել ինտենսիւ մարզումների ժամանակ: Այն կարող է մարդուն թոյլ տալ աւելի երկար մարզուել առանց յոգնելու: Որոշ փորձեր ցոյց են տալիս, որ բազուկի հիւթը բարձրացնում է միտոխոնդրիաների՝ բջիջների էներգետիկ կայանների արդիւնաւէտութիւնը: Հնարաւոր է նաեւ, որ բազուկի հիւթի բաղադրիչները՝ պոլիֆենոլները, բարձրացնում են օրգանիզմում նիտրատների կենսահասանելիութիւնը:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՍՄԲԱՏ (ՍՈՄԻԿ) ՋԱՔԱՐԵԱՆԻ

ցաւալի մահւան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, մարտի 15-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Անահիտ Քաղխողազադէ՝ այրին:

Թալին եւ Թադէ Ջաքարեաններ եւ Նայիրի Աբուլեան դուստրը, որդին եւ հարսնացուն:

Սիլւա, Շահիկ եւ Հարմիկ Շահբազեաններ՝ քոյրը՝ ընտանեօք:

Վաչիկ, Մանիկ եւ Հայբերդ Ջաքարեաններ՝ եղբայրը՝ ընտանեօք:

Ալֆրէդ,Շաքէ եւ Արգիշտի Աբուլեաններ՝ խնամիները:

Ադրինէ եւ Սուրիկ, Նարինէ եւ Արամիկ Սեֆեաններ՝ քենին՝ ընտանեօք:

Ալիս Կարապետեան՝ զաւակներով՝ քենին՝ընտանեօք:

Սարօ եւ Քաթիա, Էլին եւ Սելինա Սարոյեաններ՝ աներորդին՝ ընտանեօք:

Հերոս եւ Վալենտին, Ալեքօ եւ Ալիկ Քաղխողազադէներ՝ աներորդին՝ ընտանեօք:

Արիս եւ Այլին Շահբազեաններ, Նայիրի եւ Արբի Ասատրեաններ՝ քրոջ զաւակները:

## ՅԻՇԱՏԱԿԻ ... ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀԱՅ ԱԿՈՒՄԲ
ARMENIAN CLUB

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում միութեանս Հաշւեքննիչ մարմնի անդամ՝ Յովիկ Գոլազիզեանին եւ իր ընտանիքի բոլոր անդամներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

### ԳՈՀԱՐ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ցաւալի մահւան կապակցութեամբ:

**ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ դպրոցիս ուսուցչուհի Նարինէ Ղարիբեանին եւ բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

### ՄԵԽԱԿ ՂԱՐԻԲԵԱՆԻ

ցաւալի մահւան առթիւ:

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՇԱՆԹ - ՄԱՐԻԱՄԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԻՐԻՄԻՆ

*Դու ճարտարապէտ մեծ,*
*Անկրկնելի գործերովդ*
*Առեղծւած դարձար*
*Ու բարի յուշ*
*Որպէս՝*
*Բարութեան փիպար*
*Յաւերժ քո սիրով*
*Դու անմահացար:*

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԵԼՍՈՆ ԱԲՆՈՒՍԻ

ցաւալի մահւան առաջին տարելիցի առթիւ՝ ուրբաթ, մարտի 15-ին, ժամը 12:30-ին, այցելութիւն կը տրուի հանգուցեալի շիրիմին եւ կը կատարուի՝

**ԱՅԳՈՒՑԻ**

արարողութիւն:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Անետ Մինասեան՝ այրին:

Վահէ եւ Անայիս Աբնուսներ՝ զաւակները:

Մինասեան եւ Աբնուս ընտանիքներ՝ հարազատները:

## ՄԱՀԱԶԴ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱԼԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ փետրուարի 6-ին, Ամերիկայում:

Հանգուցեալի մահւան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, մարտի 15-ին, Թեհրանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Էդիկ Ղազարեան՝ ամուսինը:

Վիվիան եւ Փաթրիս Կիրակոսեաններ՝ դուստրը եւ փեսան:

Անահիտ եւ Սուրէն Շահվալադեաններ՝ տալը եւ իր ամուսինը:

Թալին եւ Արմոնդ Յարութիւնեաններ՝ տալոջ դուստրը եւ իր ամուսինը:

Սինէ եւ Արտեմ Ղարիբեաններ՝ տալոջ դուստրը եւ իր ամուսինը:

Դւին եւ Մինէ Շահվալադեաններ՝ տալոջ որդին եւ իր կինը:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՄԱՐԻԱՄ ՄԵՀՐԱԲԵԱՆԻ (ՋՈՎԷԼԵԱՆ)

ցաւալի մահւան քառասնօրեակի առթիւ՝ուրբաթ, մարտի 15-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Հրաչ, Հիլդա, Անաշէ եւ Էրիկ Ջովէլեաններ՝ որդին, հարսը եւ թոռները:

Հարմիկ եւ Ալինա Ջովէլեաններ՝ որդին եւ հարսը:

Նայիրի եւ Գառնի Խեչումեաններ՝ թոռնուհին եւ իր ամուսինը՝ զաւակներով:

Նարէ եւ Վեդի Սինանեաններ՝ թոռնուհին եւ իր ամուսինը:

Զեփիւռ Մեհրաբեան՝ քոյրը՝ ընտանեօք:

Էդիկ եւ Սաթօ Գորգինեաններ՝ հարազատները՝ ընտանեօք:

Ժանետ Խեչումեան՝խնամին՝ընտանեօք:

Սերժիկ եւ Ժասմէն Սինանեաններ՝ խնամիները՝ ընտանեօք:

Ջովէլեան, Մուրադեան, Գորգինեան, Աւետիսեան եւ Ջիանբանի ընտանիքները՝ հարազատները:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԿԱՐՕ ԲԱՂԵՐԻԻ

ցաւալի մահւան քառասնօրեակի առթիւ՝ուրբաթ, մարտի 15-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Բաղերի եւ Դիլանչեան ընտանիքներ՝ հարազատները:

**ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir**

**ԱԼԻՔ Օրաթերթ**

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
**ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ**
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

## ՄԱՀԱԶԴ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԳԻՒԼԻԶԱՐ ՋԱՄԱՆԵԱՆԻ (ՔԵՇԻՇԵԱՆ)

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ փետրուարի 27-ին, Ամերիկայում:

Թաղումը կը կատարուի մարտի 19-ին, նոյն վայրում:

Հանգուցեալի մահւան առթիւ՝ ուրբաթ, մարտի 15-ին, Թեհրանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Սեպուհ եւ Սաթենիկ Ջամանեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Շուշան Ջամանեան (Սիմոնեան)՝ քոյրը՝ընտանեօք:

Ջամանեան, Սիմոնեան, Կարապետեան, Խուդադուլեան, Ռոստոմեան եւ Քեշիշեան ընտանիքներ՝ հարազատները:

**ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ**

Ջամանեան ընտանիքը իր շատ սիրելի քրոջ յիշատակին կատարում է հետեւեալ նուիրատուութիւնները.

1-Թ. Հ. Թ. Կարիքաւորներին օժանդակող մարմնին՝ 20.000.000 ռ.

2-Մարմնա-մտային խանգարումներով հայ երեխաներին օժանդակող «Ակունք» կենտրոնին՝ 20.000.000 ռ.

3-«Ալիք» օրաթերթին՝ 20.000.000 ռ.

Գումարն ստանալ «Ալիք»-ից:

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՍԱՐԳԻՍ ՕՅԱՆԵԱՆԻ**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ շաբաթ, մարտի 9-ին:

Թաղումը կը կատարուի ուրբաթ, մարտի 15-ին, ժամը 14:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 12:30-ին ներկայ գտնուել Ս. Սարգիս եկեղեցու մօտ՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հայկ. Բարեգործական Ընդհ. միութեան սրահում (Գիւլբենգեան):

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Անահիտ եւ Սիլւա Օհանեաններ՝ այրին եւ դուստրը:

Սեւակ եւ Թինա Օհանեաններ՝ որդին եւ հարսը:

Վարսիկ Օհանեան՝ քոյրը:

Սուրէն եւ Քլարա Օհանեաններ՝ եղբայրը՝ ընտանեօք:

Սեւփիկ Թաթոսեան եւ Արա Թաթոսեան՝ քրոջ զաւակները՝ ընտանեօք:

Օհանեան, Մելքոնեան եւ Յակոբեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր թեմի սիրելի ժողովրդի զաւակներին եւ յատկապէս Ջէյթուն քաղաքամասի մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ 2024 թ. շաբաթ, մարտի 16-ին **Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի վիրապն** տօնն է. այս տօնը համընկնում է համանուն եկեղեցու անուանակոչութեան տօնին, այս առիթով նախագահութեամբ թեմիս բարեխնամ առաջնորդ՝

**ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ**

շաբաթ, մարտի 16-ին 2024 թ. Ջէյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցուելու է հանդիսաւոր ս. պատարագ:

| | |
|---|---|
| Սկիզբ ժամերգութեան | ժամը 9:00-ին |
| Ս. եւ անմահ պատարագ | ժամը 10:00-ին |
| Քարոզ | ժամը 11:00-ին |

Յաւարտ ս. պատարագի տեղի է ունենալու հոգեհանգստեան յատուկ արարողութիւն եկեղեցու բարերար հանգուցեալ՝ Գրիգոր Մելիքեանի եւ Մելիքեան գերդաստանի ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

Սիրով մեր հաւատացեալ ժողովրդին հրաւիրում ենք, որ մասնակցեն յիշեալ հոգեպարար արարողութեանց եւ հաղորդուեն մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի կեանքի խորհրդով:

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
هواپیمایی قشم QeshmAir
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
agency@sati-co.com ۸۸۵۴۱۲۹۸- ۹ و ۵-۸۸۵۴۱۲۴۲-۰۲۱
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۳۷۴+ ۱۰۲ ۲۲ ۸۲۴ , ۳۷۴+ ۹۶۵ ۷۵ ۳۰۵
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

## «Տաւուշի....

(Շար. 1-ին էջից)

*թւում՝ Հայաստան- Ադրբեջան յարաբերութիւններին կապուած»,- նշեց նա:*

*Դանիէլեանը ընդգծեց, որ Ռուսաստանը, Իրանն ու Թուրքիան յայտարարում են «3+3» ձեւաչափի մասին եւ Իրանից յայտարարութիւններ են հնչում բարձր մակարդակով, որ տարածաշրջանում խաղաղութիւնը պէտք է հաստատուի տարածաշրջանի երկրների ջանքերով, հաշւի առնելով նրանց շահերը, եւ եթէ արտատարածաշրջանային ուժեր են միջամտում դա ոչ մի լաւ բան չի բերի:*

*«Եթէ վերադառնանք Ֆիդան-Բլինքէն հանդիպմանը, ապա երկկողմ ձեւաչափ է ձեւաւորւում եւ հայ-ադրբեջանական յարաբերութիւնները կարգաւորւում են, այսինքն, Իրանն ու Ռուսաստանը դուրս են մնում, պարզ չէ թէ այդ երկրները, որքան են համաձայն դրան, բայց, յամենայնդէպս Մոսկւայից բաւական նեարդային յայտարարութիւններ են հնչում եւ զգուշացնում, որ ԱՄՆ-ն ու Եւրոպան խաղաղութիւն չեն բերում եւ միայն տարածաշրջանի երկրների ջանքերով է հնարաւոր խաղաղութիւն լինի»,- նշեց քաղաքագէտը:*

*Իսկ ինչ վերաբերւում է խաղաղութեան պայմանագրին, Դանիէլեանը նշեց, որ այդ խաղաղութեան պայմանագրի մասին Հայաստանում են միայն խօսում, Ադրբեջանում դրա փոխարէն հասկանում են ադրբեջանական պայմաններով խաղաղութիւն, որտեղ իրենք պէտք է մաքսիմալը կորզեն Հայաստանից: Ադրբեջանի տեսակէտից դա ուլտիմատում է եւ կապիտուլիացիա:*

ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir

# Ատոմական Էներգիայի միջազգային կազմակերպութիւնը հաւատարիմ մնայ անկողմնակալութեան սկզբունքին

*«ԱԼԻՔ» - Ատոմական էներգիայի միջազգային կազմակերպութեան ՄԱԳԱՏԷ-ի գլխաւոր տնօրէնի կողմից, կազմակերպութեան Կառավարիչների խորհրդին ուղղուած զեկոյցներին առ ի պատասխան, Իրանի բացատրական գրութիւնը հրապարակուել է Վիեննայում տեղակայուած միջազգային կազմակերպութիւններում եւ ՄԱԿ-ի գրասենեակում:*

*ԻՌՆԱ-ի հաւաստմամբ՝ Իրանի բացատրական գրութեան մէջ նշւած է. «Դժբախտաբար, ՄԱԳԱՏԷ-ի գնահատականները հիմնուած են ոչ հաւաստի տեղեկութիւնների, եւ ոչ հաւաստի փաստաթղթերի վրայ, որոնք տրամադրուել են այնպիսի ռեժիմի կողմից, որը միշտ դաւեր է նիւթում ՄԱԳԱՏԷ-ի հետ Իրանի յարաբերութիւնների դէմ:*

*Իրանը, երբ որոշում ընդունեց դադարեցնել Միջուկային գործարքի համապարփակ ծրագրում իր պարտաւորութիւնների իրականացումը, դա կատարելապէս համահունչ էր երկրի բնածին իրաւունքներին, եւ պատասխան քայլ էր այդ համաձայնագրից ԱՄՆ-ի անօրինական հեռացման եւ եւրոպական երեք երկրների կողմից իրենց պարտաւորութիւններին հաւատարիմ մնալու անկարողութեան: Այս բացայայտ իրականութիւնը չի կարող հիմք հանդիսանալ եւրոպական երեք երկրների համար հրաժարուելու իրենց պարտաւորութիւններից:*

*Թէեւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը երկու անգամ (2014 թ. հոկտեմբերի 15-ին եւ 2015 թ. փետրուարին) ընդունել է կազմակերպութեան կողմից առաջարկուած 14 նոր տեսուչների նշանակումը, ցաւօք, այդ հարցը պատշաճ կերպով չի արտացոլել զեկոյցում:*

*Իրանի հրապարակած գրութեան մէջ նաեւ նշւած է, որ Իրանը Ատոմական էներգիայի միջազգային կազմակերպութեան հետ առաւել համագործակցութեան շրջագծում, վերջին տարիներին կամաւոր քայլեր է ձեռնարկել մի քանի համատեղ յայտարարութիւնների շրջանակում, ինչպէս 2023 թւականի մարտի 4-ի համատեղ յայտարարութիւնը:*

*Մէկ այլ կէտի մէջ նշւած է, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը կրկին շեշտում է կազմակերպութեանը տրամադրւող համագործակցութեան կարեւորութիւնն ու արժէքը: Այս կառուցողական համագործակցութիւնը չպէտք է նսեմանայ անհեռատես քաղաքական շահերի պատճառով: Ուստի, կազմակերպութիւնը պարտաւոր է վերահաստութիւն տալ նման հարցերի, կանխելու՝ Իրանի ու կազմակերպութեան միջեւ լայնածաւալ համագործակցութեան խեղաթիւրումը:*

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

«Օջ Դոռնա»
օդանաւային ընկերութիւն
آژانس هواپیمایی اوج درنا
با بیش از ۲۵ سال تجربه
تور و ویزای اروپا و انگلیس
صد در صد تضمینی
کل اروپا و آسیا
استرالیا
کانادا
امریکا
فروش بلیط با بهترین نرخ در مسیرهای
آدرس: خیابان مطهری، نرسیده به لارستان، پلاک ۴۵۸
تلفن: ۲۲۲ ۹۴ ۸۸۸
۱۱۱ ۲۶ ۸۸۹
۰۹۹۱ ۳۲۳ ۱۳ ۲۰
مارلنه شاهبنده
@OUJ.DORNA

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**